«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

10 մարտի, 2026թ. N 4 - Լ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Պալատ) Աուդիտորական գործունեության հանձնաժողովի կանոնադրության 7.2 կետը՝ Պալատի խորհուրդը որոշում է՝

1. Հաստատել «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության Աուդիտորական գործունեության հանձնաժողովի 2025 թվականի տարեկան գործունեության հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Պալատի պաշտոնական կայքում հրապարակման պահից:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ **ՄԱՆՎԵԼ ՂԱԶԱՐՅԱՆ**

Հավելված

«Հայաստանի աուդիտորների և փորձագետ
հաշվապահների պալատ»
հասարակական կազմակերպության խորհրդի
2026 թ. մարտի 10-ի N 4 – Լ որոշման

«Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ»
հասարակական կազմակերպության
Աուդիտորական գործունեության հանձնաժողովի
2025թ. տարեկան գործունեության հաշվետվություն

Աուդիտորական գործունեության հանձնաժողովի ձևավորումը

«Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Պալատ) Աուդիտորական գործունեության հանձնաժողովը (այսուհետ՝ Աուդիտի հանձնաժողով) ձևավորվել է 2021թ. հունիսին: Նույն տարում Պալատի խորհրդի համապատասխան որոշումներով հաստատվել են Աուդիտի հանձնաժողովի կանոնադրությունը և անհատական կազմը:

Աուդիտորական գործունեության հանձնաժողովի գործունեությունը 2025թ.-ին

2025թ.-ի ընթացքում Աուդիտի հանձնաժողովի կազմում տեղի են ունեցել փոփոխություններ: 2025թ.-ի օգոստոսին հանձնաժողովի նախագահի պաշտոնը Էմիլ Վասիլյանի փոխարեն ստանձնել է Իրինա Գևորգյանը: Հանձնաժողովի նոր կազմը հետևյալն է՝

Իրինա Գևորգյան (նախագահ)	«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ
Դավիթ Շամշյան	«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ
Լևոն Ղոնյան	«Երևան-Աուդիտ Կոնսալտ» ՓԲԸ
Մարիամ Ավետիսյան	«ԲԻ-ԴԻ-Օ Արմենիա» ՓԲԸ
Ելենա Ադամյան	«Էրնսթ Ընդ Յանգ» ՓԲԸ
Լիլիթ Հարությունյան	«Նեքսիա Արմենիա» ՓԲԸ
Լիլիթ Մայիլյան	«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ

2025թ.-ի ընթացքում Աուդիտի հանձնաժողովի կողմից թարգմանվել և պատրաստվել է ISQM 1-ին վերաբերող Excel ձևաչափով ուղեցույց, որն ուղարկվել է բոլոր աուդիտորական կազմակերպություններին:

Աուդիտի հանձնաժողովի անդամների կողմից կամ ուղղորդմամբ անցկացվել են թվով 12 ՇՄՋ դասընթացներ, որոնք ստացել են դրական արձագանք և ակնկալվում է, որ նման դասընթացները հետագայում ավելի հաճախակի կիրականացվեն: 2025թ.-ի ընթացքում Աուդիտի հանձնաժողովն անցկացրել է թվով 6 նիստ և 4 հանդիպում ISQM 1-ի շուրջ, ընդհանուր 10 ժամ:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2025Թ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ

Գործառույթ	Միջոցառում	Կատարում
Աշխատաժողովի, սեմինարի կամ այլ միջոցառման կազմակերպում	Կուսումնասիրվեն նման Միջոցառումների կազմակերպման թեմաները և կներկայացվեն Պալատի Խորհրդի հավանությանը, որից հետո կկազմակերպվի նման միջոցառում՝ աուդիտորական կազմակերպությունների հետ:	Որոշվել է կազմակերպել դասընթացներ աուդիտի ամբողջ գործընթացի շուրջ ամբողջական կուրսի տեսքով առավել կիրառական մատուցմամբ փորձառու անդամների համար: Իրագործումը պլանավորվել է 2026թ.-ին:
Աուդիտորական գործունեության վերաբերյալ տեղեկատվական նյութերի պատրաստում, հրապարակում և տարածում	Կուսումնասիրվեն ԱՄՍ-երում կամ ՀՀ օրենսդրական դաշտում աուդիտորական գործունեությանը վերաբերող փոփոխություններն ու նորությունները և տեղեկատվական նյութերի տեսքով կներկայացվեն աուդիտորական կազմակերպություններին:	Թարգմանվել և պատրաստվել է ISQM 1-ին վերաբերող Excel ձևաչափով ուղեցույց, որն ուղարկվել է բոլոր աուդիտորական կազմակերպություններին:

Աուդիտորական գործունեության ոլորտին վերաբերող շարունակական մասնագիտական զարգացման դասընթացների նախաձեռնում	Կկազմակերպվեն ՇՄԶ դասընթացներ՝ աուդիտին վերաբերող տարբեր թեմաներով	Հանձնաժողովի անդամների կողմից կամ ուղղորդմամբ անցկացվել են թվով 12 ՇՄԶ դասընթացներ: - «ԱՄՍ 240 – Ֆինանսական Հաշվետվությունների աուդիտի ընթացքում խարդախության հետ կապված աուդիտորի պատասխանատվությունը» - «Աուդիտի որակի կառավարում» - «ԱՄՍ 570 – Կազմակերպության գործունեության անընդհատությունը (փոփոխված 2024թ.)» - «ՖՀՄՍ թարմացումներ, ներառյալ ՖՀՄՍ 18 - Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» - «ԱՄՍ 320 – Էականությունը աուդիտի պլանավորման և իրականացման գործընթացում և ԱՄՍ 510 – Սկզբնական աուդիտի առաջադրանքներ – սկզբնական մնացորդներ» - «Խմբի ֆինանսական հաշվետվությունների աուդիտների հիմնական փոփոխությունները՝

		վերանայված ԱՄՍ 6000-ի համաձայն» - «ԱՄՍ 530 – Աուդիտորական ընտրանք և ԱՄՍ 230 – Էականությունը աուդիտի պլանավորման և իրականացման գործընթացում» - «Աուդիտորական ապացույցներ» - «ԱՄՍ 320 – Վերլուծական ընթացակարգեր և ԱՄՍ 540 – Հաշվապահական հաշվառման գնահատումների աուդիտ» - «Ռիսկերի գնահատում» - «ISQM 1 – Որակի կառավարման միջազգային ստանդարտ 1» - «Խեղաթյուրումների գնահատում»
Հանձնաժողովի կողմից այլ գործառույթների իրականացման համար կոնկրետ միջոցառումներ	Աուդիտորական կազմակերպությունների կողմից բարձրացված հարցերի (այդ թվում մեթոդաբանական) քննարկում:	2025թ. ընթացքում ուսումնասիրել է աուդիտորական կազմակերպությունների կողմից բարձրացված 3 հարց, արձագանքն ուղարկվել է բոլոր կազմակերպություններին
Պալատի խորհրդի հանձնարարականների կատարում	Աուդիտի ոլորտի զարգացմանն ուղղված այլ նախաձեռնություններ:	Հանձնաժողովի նախագահը մասնակցել է Համաշխարհային բանկի կողմից կազմակերպված

		Աուդիտորական և հաշվապահական ստանդարտների պահպանման ստուգման աշխատանքների ամփոփ ներկայացմանը և քննարկմանը:
Այլ գործառույթներ	Կկազմակերպվեն ըստ անհրաժեշտության:	2025թ.-ի ընթացքում Հանձնաժողովն անցկացրել է թվով 6 նիստ:

Պալատի Աուդիտի հանձնաժողովի նախագահ՝ **Իրինա Գևորգյան**